

ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀԻ ԾԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՏԻՊԵՐԻ
ԶՈՒԳԱԶԵՌՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ
Գրիգորյան Ա. (Ճարտարապետության ազգային թանգարան-
ինստիտուտ, Հայաստան)
armarchmuseum@gmail.com

Բանալի բառեր՝ Հայկական լեռնաշխարհ, ճարտարապետական
նախատիպ, սրահ, Լեման-Հաուպտ, մեգարոն, Մոլծածիր:

Հայկական լեռնաշխարհի ճարտարապետական հորինվածքների
նախատիպերի և դրանց զուգահեռների համեմատական
վերլուծությունը ինքնին կարևոր է պարզաբանելու համար բնակելի
և պաշտամունքային կառույցների նախատիպերի ծագման,
զարգացման և տարածման պատմությունը,
առանձնահատկություններն ու օրինաչափությունները:

Հայկական լեռնաշխարհին վերաբերող պատմահնագիտական,
գիտահետազոտական հարուստ նյութերը թույլ են տալիս հետևել, որ
բնակելի և պաշտամունքային կառույցների հորինվածքային
նախատիպերը բնական և ձեռակերտ պարզ հորինվածքներից
շարունակաբար զարգանալով, տարածվել են նաև հարևան
երկրներ, պահպանելով նախնական շատ ձևաստեղծ տարրեր և
օրինաչափություններ, զարգացել նոր միջավայրում՝ նոր որակներ
ապահովելով: Այսպես, բնական ապաստարանից մինչև ձեռակերտ
միաբջիջ, ապա բազմաբջիջ և համալիր-բնակելի տների տեսակներից
առաջացել են փողոցների և նրբանցքների շուրջ համախմբված
բնակելի թաղամասեր, վերջիններիս «կրկնությամբ» բնակելի
միջավայրի ավելի ընդարձակ միավորներ՝ գյուղ, ավան, քաղաք
համալիրներ: Սակայն այս համընդհանուր մոտեցմանը զուգընթաց
առաջացել են բլուր (արհեստական) բնակավայրեր՝ «շենգավիթյան»
(5-3-րդ հազարամյակներ Ք. ա.) կլոր հատակագծով
բնակարաններով կազմված: Բնակելի կլոր և ապա քառանկյուն
հատակագծով բնակելի տները ունեցել են մեկ ընդհանրություն,

դրանց հատակագծային կենտրոնում տեղադրված են եղել օջախ-կրակատեղիները և առաստաղում ունեցել են երդիկներ: Այս տիպերը Արարատյան թագավորության շրջանում վեր են ածել կանոնավոր ուղղանկյուն և քառակուսի հատակագծով բնակելի տան տիպերի, պահպանելով արդեն նկարագրված ընդհանրությունները: Ավելին՝ առաջացել են մեկ, երկու, չորս սյունանի հորինվածքներ՝ մուտքի մասում ունենալով սրահ-շվաք-երեսբացներ: Այս տիպերը, առաջանալով հայկական լեռնաշխարհում, տարածվել են նաև հարևան երկրներ: Լեման-Հաուլպոի կարծիքով *templum in antis* (անտավոր-երեսբացով տիպը Ա. Հ.) իր մյուս բաղկացուցիչ տարրերով փոքրասիական ծագում ունի և ոչ թե հույներից է անցել այլ, ընդհակառակը, փոքրասիացիներից է անցել հույներին: Լեման-Հաուլպոն համոզված է, որ այս տիպի նախատիպերը կառուցել են հայերը և արմենները: Հետաքրքրական է, որ Մեգարոն (*μεγαρον*) – «մեծ տուն» – գլխատուն – երդիկով տան տիպը, Հոմերոսի մոտ կոչվում է նաև *μελαυρον* – «սև տուն», մի տուն, որ ցույց է տալիս նրա որմերի սևացած լինելն օջախի ծխից (ինչպես դարադամում, գլխատնում, դարբասիում, Էրդոանի սախլիում և այլն Ա. Հ.): Այստեղ էլ Մեգարոնի առջևի մասն էր կազմում պրոդոմոսը (*προδομος*) – «նախատունը» – հայկական տարբերակում՝ սրահ-շվաք – երեսբացը: Նույն տերմին անվանում ենք նկատում հռոմեական (լատինական) բնակարանում, որտեղ *atrium* նշանակում է «սև սենյակ»: Տիպաբանական նմանություններն, ինչ խոսք, ակնհայտ են, իսկ նախատիպերի ելակետը՝ կռահելի:

Հայկական լեռնաշխարհի հնագույն բնակարանն, իր էական գծերով, մեզ տանում է ոչ միայն դեպի բրոնզեդարյան և ապա նեոլիթյան կուլտուրաները, այլ դեպի այն քարանձավները, այրերն ու սորերը, որոնց մեջ մի ժամանակ բնակվում էր պալեոլիթի մարդը: Նման իրավիճակ է նկատվում նաև պաշտամունքային կառույցների նախատիպերում: Ակնհայտ է «բլուր-տաճար» հորինվածքների և միջագետքյան զիկկուրատների նմանությունը: Պատահական չէր, որ հայ վարպետ-շինարարներ էին հրավիրվում Միջագետք՝ տաճարներ

կառուցելու համար: Արատտացի վարպետները շումերում կառուցել են Ուրուկի հռչակավոր էաննայի տաճարը (որի անունով երբեմն կոչվել է Ուրուկ քաղաքը): Տաճարաշինական նախատիպերի ստեղծումն ու տարածումը շարունակվել է նաև հետագայում: Մոլծածիրի տաճարն իր սյունաշար ճակտոնով, անկասկած, հունահռոմեական տաճարի նախատիպն է:

THE COMPARATIVE ANALYZE OF THE PARALLELS OF THE ARMENIAN
HIGHLAND'S ARCHITECTURAL PROTOTY

Grigoryan A. (National Museum-Institute of Architecture, Armenia)